Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● Էլ.հասցե ● Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Գործնական աշխատանքների գնահատումը տարրական դպրոցում
Ուսուցչի տվյալներ ● Ա.Ա.Հ. ● Մասնագիտություն ● Հեռախոս ● Էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	Զոհրաբյան Մանուշակ Միհրի Դասվար մայրենի, մաթեմատիկա, կերպարվեստ, տեխնոլոգիա, ես և շրջակա աշխարհը 1-4-րդ

Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Արտենիի հիմնական դպրոց himnakandproc@mail.ru arteni2@schools.am

Բովանդակություն

1. Ներածություն
2. Գլուխ 1. Գործնական աշխատանքների գնահատումը տարրական դպրոցում:
3. Գլուխ 2. Հարցադրումների մեթոդի կիրառությունը գործնական աշխատանքների արդյունավետ գնահատման գործում մայրենիի ժամերին:
4. Եզրակացություն:
5. Օգտագործված գրականության ցանկ:

Ներածություն

Կրթության համակարգի հումանացման և ժողովրդավարացման, դպրոցի զարգացման արդի փուլում առաջին պլան է մղվում աշակերտների ուսումնական գործունեության արդյունավետ կազմակերպման, դրա որակի վերահսկման վերաբերյալ նոր մոտեցումների առաջադրման հիմնախնդիրը: Տարրական կրթության գերակա խնդիրը կրտսեր դպրոցականի անձի զարգացումն է, նրա՝ որպես ուսումնական գործընթացի և ինքնազարգացման սուբյեկտի կայացումը և անհատականության ձևավորումը: Սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկմամբ բացահայտվում են դրանց ձևավորվածության մակարդակները և ուսուցման գործընթացում առկա թերությունները, որոնք նրանք ձեռք են բերում ուսումնական աշխատանքների կատարման յուրաքանչյուր փուլում: Այդ տեսանկյունից տարրական դպրոցում սովորողների ուսման որակի վերահսկումը, գիտելիքների գնահատումը համարվում է ուսուցման գործընթացի

էական բաղադրիչը, որոնցով և բնութագրվում է դպրոցի գործունեության արդյունավետությունը: Այն ենթադրում է ոչ միայն գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների ձևավորվածության մակարդակի բացահայտում, այլև ուսումնական գործունեության դրդապատճառների ձևավորում, ինքնավերահսկման, ինքնգնահատման, ինքնաստուգման կարողությունների զարգացում: Սովորողների ուսումնական հաջողությունները պայմանավորված են նաև աշակերտի ուսումնական դրդապատճառներով, ինքնուրույնությամբ, ակտիվությամբ: Ուսուցիչների մանկավարժական գործունեության նպատակը այսօր դառնում է ոչ միայն գիտելիքների հաղորդումը, այլև սովորողների ինքնագործունեության կազմակերպման հմտությունների ձևավորումը, որն իր հերթին ենթադրում է ուսուցչական հսկողության փոխարինումը սովորողների կողմից սեփական գործունեության ինքնահսկման և ինքնակարգավորմամբ: Ուսուցման սկզբունքների, տարբեր մեթոդների ու ձևերի կիրառման արդյունավետությունը, դասագրքերի նպատակային օգտագործումը և մեթոդական մշակումների որակը, կրթության բովանդակությունը ուղղակիորեն կապված են այդ հիմնախնդրի լուծման հետ: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկումը, ստուգումը և գնահատումը ուղղված են սովորողների ուսուցման արդյունքի և ուսման որակի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ստացմանը, որը վերլուծելով ուսուցիչը անհրաժեշտ շտկումներ է մտցնում ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման մեջ: Դրա համակարգվածությունից, հրապարակայնությունից և օբյեկտիվությունից են կախված ուսուցման որակը և դաստիարակչական շատ խնդիրների լուծման արդյունավետությունը: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման, դրանց հաշվառման, ստուգման ու գնահատման հիմնախնդիրը հետազոտողները քննարկել են տարբեր տեսանկյուններից:

Նպատակը եւ հետազոտական հարցը	Ինչպես է հարցադրումների մեթոդը օգնում գործնական աշխատանքների ժամանակ մայրենիի ժամին
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Գործնական աշխատանքների արդյունավետ կազմակերպումը և գնահատումը նոր մոտեցումներով նպաստում է սովորողների ուսուցման որակի բարձրացմանը:

Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Ինքնուրույնություն, վերլուծելու կարողություններ, դիտունակություն, քննադատական մտածողության զարգացում, փոխըմբռնում, հարգանքի և հանդուրժողականության դրսևորում, կազմակերպչական հմտություններ:
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Առարկայական վերապատրաստման ընթացքում

Պարագրաֆներ/մասեր

1. ԳԼՈՒԽ 1. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում մեծ դեր ու նշանակություն ունի գործնական ինքնուրույն աշխատանքը: Այն դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Աշակերտների ինքնուրույն գործունեությունը կարևոր է ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառներում: Ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող հանաչողական կարողություններն ու հմտությունները: Ինքնուրույն գործունեության նպատակը նոր սերնդին կյանքին, աշխատանքին նախապատրաստելն է: Ինքնուրույն գործունեության նպատակը բոլոր ժամանակներում որոշվում է հասարակական պահանջներով, գիտատեխնիկական առաջընթացի զարգացումով, մանկավարժության տեսության և պրակտիկայի զարգացման մակարդակով, ուսումնական հաստատություններով և ուսուցիչների զարգացման մակարդակով: Ինքնուրույն գործունեության նպատակի սահմանման հարցը որքան հին է, այնքան էլ արդիական է:

Այս գործընթացում կարևոր է աշակերտների հանաչողական գործունեության ակտիվացումը, նոր հնարների, մեթոդների կիրառումը՝ գիտելիքների գիտակցական և առավելագույն յուրացման համար: Դասավանդումը և ուսումնառությունը սերտորեն փոխկապված են. ուսուցման գործընթացը սուբյեկտ–սուբյեկտ փոխազդեցություն է, որում աշակերտները մշտապես պետք է գտնվեն սուբյեկտի

դերում: Այս մոտեցումը բխում է անձնակենտրոն կրթության հայեցակարգային դրույթներից և արդիական է հատկապես տեղեկատվական հասարակության զարգացման արդի ժամանակաշրջանում: Ըստ Դ.Բ.Էլկոնինի՝ արդյունավետ ուսումնական գործունեության հիմնական առանձնահատկությունն այն է, որ աշակերտը փոխում է ինքն իրեն: Սա նշանակում է, որ կրտսեր դպրոցականն անտարբեր չէ իր գործունեության նկատմամբ, գիտակցում է գիտելիքներ ստանալու կարևորությունը, կարողանում է պարզ ենթադրություններ կատարել և փաստարկներ գտնել դրանց հիմնավորման ու ապացուցման համար, տարրական մակարդակով վերլուծում է իր գործունեությունը, գնահատում է հաջողությունները, որոշում է անհաջողությունների կամ սխալների պատճառները և փորձում դրանք ուղղել: Բայց դա հնարավոր է, եթե ձևավորվում է ուսումնական գործունեություն ծավալելու աշակերտի կարողությունը, և նա դառնում է ուսուցման գործընթացի սուբյեկտ: Աշակերտին սովորել են սովորեցնում, երբ նա ուսուցման արդյունքների հարցում զգում է անձնական պատասխանատվություն, ունի ինքնակրթության և ինքնազարգացման կարողություններ: Ուսուցման զարգացնող գործառույթի իրականացումը ենթադրում է ուսուցման գործընթացում անձի ճանաչողական հետաքրքրությունների ընդլայնում և բավարարում, տրամաբանական գործընթացների ակտիվացում, վերլուծելու, համադրելու, համակարգելու, ընդհանրացնելու, վերացարկելու, համեմատելու, փաստարկելու, դասակարգելու, ամփոփելու, եզրահանգելու կարողությունների ձևավորում, մտագործունեության ակտիվացում, լեզվամտածողության և խոսքի մշակույթի զարգացում, սենսորային և շարժողական հմտությունների ակտիվացում, ստեղծագործական ունակությունների բացահայտում, վերլուծական, քննադատական, տրամաբանական մտածողության զարգացում: Միայն այս պայմաններում ուսուցման գործընթացում գիտելիքների յուրացումն ընթանում է սովորողի զարգացմամբ և կազմակերպված է այնպես, որ սովորողներին ընդգրկում է ակտիվ և գիտակցական բազմաբնույթ գործունեության այնպիսի տեսակների մեջ, որոնք զարգացնում են նրա զգայական ընկալումը, շարժողական, մտավոր, կամային, հուզական, դրդապատճառային ոլորտները:

Հաշվի առնելով այս ամենը՝ մշակվել են տարրական դպրոցում գործնական աշխատանքների գնահատմանը և վերահսկողությանը ներկայացվող մի շարք պահանջներ՝

♦Օբյեկտիվություն՝ վերահսկողություն իրականացնելիս կարևոր է ուսուցչի օբյեկտիվ մոտեցումը թե՛ աշակերտների նկատմամբ, թե նրանց կատարած աշխատանքների արդյունքները գնահատելիս:

♦Անհատական մոտեցում՝ ուսումնական գործընթացի վերահսկողության գործընթացում կարևոր է յուրաքանչյուր սովորողի նկատմամբ անհատական մոտեցումը՝ նկատի ունենալով նրանց ունակությունների և հնարավորությունների մակարդակները, հոգեկան գործընթացների առանձնահատկությունները, ուսումնական դրդապատճառները և այլն:

♦ Կանոնակարգվածություն՝ ուսումնական գործընթացի վերահսկողության արդյունավետությունը պայմանավորված է նրա իրականացման համակարգվածությամբ և կանոնավորությամբ: Պատահական, անկազմակերպ, չկանոնակարգված և ոչ տեղին վերահսկողությունը չի կարող արդյունավետ լինել:

♦Թափանցիկություն, վերահսկողությունը պետք է լինի պարզ, հասանելի, հիմնավոր և թափանցիկ յուրաքանչյուր սովորողի համար: Աշակերտները պետք է միշտ իրազեկվեն, թե երբ և ինչու են այդ մակարդակով գնահատվում:

♦Բազմակողմանիություն, անհրաժեշտ է ստուգել և գնահատել ոչ միայն աշակերտների գիտելիքները, այլ նաև նրանց սովորելու պատրաստակամությունը, ստեղծագործականությունը, ինքնուրույնությունը, վերաբերմունքը, ակտիվությունը, մտքի ճկունությունը, գործնական կարողությունները, արժեհամակարգը և այլն:

♦Բարեկրթության նորմերի պահպանում, գնահատելիս երբեք չի կարելի վիրավորել սովորողի անձը, նրա ինքնասիրությունը, արժանապատվությունը: Ուսումնական գործընթացի վերահսկողության ժամանակ տարրական դպրոցի ուսուցիչը պետք է հետևի բարեկրթության բոլոր կանոններին և նույնը սովորոցնի իր սաներին:

♦ Խթանող բնույթը, վերահսկողությունը չպետք է վախեցնի և հիասթափեցնի կրտսեր դպրոցականներին, այլ հակառակը՝ այն պետք է խթանի նրանց տարաբնույթ գործունեությունը, ոգևորի և աջակցի առաջխաղացմանը:

Ուսումնական գործունեության կարևոր բաղադրամասը գնահատումն է, որի ընթացքում ուսուցիչն աշակերտին ճշանակում է ոչ միայն միավորային գնահատական, այլև մեկնաբանում է, հիմնավորում այն, ինչը երեխայի աշխատանքում լավ է, ճշում առաջադիմության շարժընթացը՝ շեշտադրելով դրականը, բացասականը, ուղղորդում, թե ինչը պետք է շտկի կամ հետագայում զարգացնի: Այսինքն՝ ուսուցիչը պետք է գնահատման որոշակի չափանիշներ, կողմնորոշիչներ ներկայացնի երեխային, որի արդյունքում նա կկարողանա գնահատել սեփական աշխատանքի արդյունքները: Խոսելով ինքնագնահատականի մասին՝ պետք է ճշել, որ երեխան հիմնականում դպրոց է գալիս բարձրացված ինքնագնահատականով: Ընդհանրապես, երեխայի կողմից բարձր է գնահատվում այն աշխատանքը, որն արագ է արվում, որի վրա ինքը շատ ջանքեր է ծախսում՝ հաճախ անտեսելով ստացած արդյունքը: Ի դեպ՝ կրտսեր դպրոցականն ավելի քննադատաբար է մոտենում ընկերների աշխատանքին՝ բարձր արժևորելով սեփական աշխատանքը: Հարկավոր է հասնել նրան, որ երեխան գնահատի ոչ միայն իր աշխատանքի վերջնարդյունքը, այլև իր ուսումնական գործունեության ողջ գործընթացը: Անառարկելի է, որ ուսումնառությունը մի գործունեություն է, որը սովորողներից պահանջում է մտավոր ունակություններ, հոգեկան գործընթացների զարգացման որոշակի մակարդակ, որոշակի կազմակերպվածություն, կարգապահություն և կամային ջանքեր: Դասարանական կոլեկտիվը սոսկ տարեկիցների խումբ չէ, այն ենթադրում է անձնական ցանկությունները ընդհանուր ձգտումներին

ենթարկելու կարողություն, համագործակցություն, փոխադարձ պահանջկոտություն, փոխօգնություն, կոլեկտիվ պատասխանատվություն, կազմակերպվածություն և կարգապահության բարձր մակարդակ: Իսկ դրանք հասարակական վարքի բնութագրիչներ են, որոնց հիմքերը դրվում են տարրական դպրոցում: Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ուսուցչի և աշակերտի համատեղ, միաժամանակյա գործունեությամբ:

Տարրական դպրոցում կիրառվում են աշակերտների գործունեության վերահսկողության տարբեր տեսակներ՝ նախնական, ընթացիկ, պարբերական և հանրագումարային: Նախնական վերահսկողության միջոցով որոշում են աշակերտների՝ ճանաչողական գործունեություն ծավալելու մակարդակը, որն անհրաժեշտ է կրտսեր դպրոցականների հետ իրականացվող կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ ուղիների որոնման, հետագա աշխատանքի նախագիծը կազմելու համար:[1] Ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է ամեն օր՝ դասերի ընթացքում: Այն իրականացվում է աշակերտների գործունեության ուսումնասիրության և դիտման միջոցով և օգնում է ուսուցչին՝ պարզելու, թե որքանով են աշակերտները յուրացրել ուսումնական նյութը, որքանով է հնարավոր տվյալ ուսումնական նյութի շրջանակներում ձևավորվել անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ և այլն: Պարբերական վերահսկողությունը հաճախ անվանում են նաև թեմատիկ, քանի որ այն իրականացվում է առարկայական ծրագրով նախատեսված թեմաներն ուսումնասիրելուց հետո: Վերահսկողության այս տեսակի կազմակերպումը պահանջում է, մի շարք պայմանների ապահովում: Սովորողները պետք է՝

♦Նախապես տեղեկացված լինեն վերահսկողության ժամկետների մասին,

♦ծանոթ լինեն վերահսկողության նպատակներին, բովանդակությանը և անցկացման ձևերին,

♦գնահատականը բարձրացնելու նպատակով ունենան ուսումնական նյութը վերահանձնելու հնարավորություն: Պարբերական վերահսկողության գործընթացում կիրառվում են վերահսկողության տարբեր ձևեր՝ գրավոր ստուգողական աշխատանք, թելադրություն, փոխադրություն, թեստ, ստուգարք և այլն:

Ժամանակակից տարրական դպրոցում կիրառվում են վերահսկողության հետևյալ մեթոդները, ձևերը.

♦բանավոր հարցում,

♦գրավոր հարցում,

♦տնային աշխատանքների ստուգում,

♦գործնական վերահսկողություն,

♦թեստային վերահսկողություն,

---

[1] Ասատրյան Զ.Ա., Անձնակողմնորոշիչ մոտեցման արդի խնդիրները ժամանակակից գնահատման համակարգում, Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն, Եր., Զանգակ– 97, 2009, 228, 13-19 էջ:

♦թղթապանակի ներկայացում:

Բանավոր հարցումը վերահսկողության ամենատարածված ձևն է: Այն սովորողի բանավոր պատասխանն է յուրացրած ուսումնական նյութի շուրջ: Հարցման միջոցով հնարավոր է պարզել ոչ միայն յուրաքանչյուր սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման մակարդակը, այլ նաև ճշտել՝ նա որքանով է պատրաստ նոր նյութը յուրացնելուն: Հարցումը կարող է լինել անհատական, ընդհանուր և համակցված: Բանավոր հարցման գործընթացին գործվածվող հարցաշարին ներկայացվում են որոշակի պահանջներ: Հարցաշարը պետք է կազմվի նախապես, իսկ ուսուցիչը պետք է պատրաստ լինի ակնկալվող պատասխանների տարբերակներին. ♦ լինի հնարավորինս բազմապատասխան, անհրաժեշտ է խուսափել ,«այո,, կամ ,,ոչ,, պատասխան ակնկալող հարցերից. ♦խուսափել այնպիսի հարցերից, որոնք աշակերտներին կմղեն ուսումնական նյութի մեխանիկական վերարտադրման, ♦հետաքրքրի և կենտրոնացնի ամբողջ դասարանի ուշադրությունը, ♦մատչելի լինի ամբողջ դասարանին, ♦չպետք է կրի ձևական բնույթ /օրինակ, ի՞նչ է նշանակում/, ♦ունենա զարգացնող բնույթ և աշակերտներին մղի իմացական, վերլուծական, ստեղծագործական գործունեության, ♦կազմվի տրամաբանական հաջորդականությամբ, ♦ուսուցիչը պետք է ոչ միայն ուշադիր լսի սովորողի պատասխանը, այլև նրան ոգևորի դիմախաղով, ժեստերով, խոսքով և այլն, ♦աշակերտի պատասխանը մեկնաբանի միայն ավարտից հետո, ընդհատել կարելի է միայն այն դեպքում, եթե աշակերտը շեղվում է ճիշտ պատասխանից: Գրավոր հարցումը տարրական դպրոցում հիմնականում կիրառվում է կարճատև ինքնուրույն աշխատանքների ձևով: Գրավոր հարցման հիմնական տեսակը թելադրությունն է, որն ունի տարբեր ձևեր՝ նախազգուշական, բացատրական, ստեղծագործական, ստուգողական և այլն: Ստուգողական գրավոր աշխատանքը կազմակերպվում է առարկայական ծրագրի որևէ բաժինը կամ թեման ավարտելուց հետո: Ստուգողական աշխատանք կազմակերպելուց առաջ սովորողները տեղեկացվում են, և կազմակերպվում են նախապատրաստական աշխատանքներ: Տնային աշխատանքների ստուգումը դասի կառուցվածքի առաջատար բաղադրիչներից է: Այն տարրական դասարաններում կարևորվում է, որովհետև ստեղծում է աշակերտների կողմից ամեն օր ուսումնական նյութի յուրացումը ստուգելու, ուսումնական աշխատանքում առկա թերությունները ու բացթողումները բացահայտելու հնարավորություն: Տարրական դպրոցում տնային աշխատանքների ստուգման բաղադրիչն ունի մի շարք առանձնահատկություններ՝

♦որպես տնային աշխատանք հանձնարարվում են միայն այն առաջադրանքները, որոնք նախապես պարզաբանված են և աշակերտներին հասկանալի,

♦տնային աշխատանքները պետք է մատչելի լինեն բոլոր սովորողներին,

♦չի կարելի կրտսեր դպրոցականներին չափից ավելի ծանրաբեռնել տնային աշխատանքներով, առաջադրանքներով,

♦անհրաժեշտ է կարևորել տնային առաջադրանքների կատարման ինքնուրույնությունը, քանի որ այս տարիքում հաճախ երեխաների փոխարեն ծնողներն են կատարում բոլոր հանձնարարությունները:

Գործնական վերահսկողության միջոցով հնարավոր է պարզել որոշակի ուսումնական նյութից սովորողների ձեռք բերած կարողությունների ու հմտությունների ձևավորվածության մակարդակը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՄԱՅՐԵՆԻԻ ԺԱՄԵՐԻՆ

Առաջնորդվելով կրթական բարեփոխումների արդի պահանջներով՝ սովորողների ձեռքբերումների գնահատումը պետք է կիրառել ոչ միայն որպես ուսուցման արդյունքների ստուգման և վերահսկման միջոց, այլ նաև այն դարձնել ուսումնադաստիարակչական գործընթացի անբաժանելի մաս: Այս դեպքում տարրական դպրոցի ուսուցիչը հաշվի է առնում աշակերտների ուսումնական գործունեության ամբողջականությունը (հին դասի հարցման և նոր դասի բացատրման գործընթացները), ուսումնական նյութը պատմելը, հարցերին պատասխանելը, ակտիվությունը, ինքնուրույնությունը, վարքը և այլն, գնահատականը գնահատումի հետևանքն է՝ շարունակական բաղադրիչը: Որպես գնահատական կարող է հանդես գալ ուսուցչի դիմախաղը, ժեստերը, խոսքը և այլն: Թվանշանը գնահատականի հստակ արտահայտությունն է /օրինակ՝ 7, 8/: Արդի դպրոցում գործում է գնահատման «,տասը,, միավորային համակարգը: Սակայն հաճախ, բացի թվանշանից, ուսուցիչը կիրառում է խոսքային գնահատումները՝ շա՛տ լավ է, «ապրե՛ս, «կարող էիր ավելի լավ պատասխանել, այսօր լավ չես աշխատում և այլն: Գնահատման միջոց է նաև օրագրում աշակերտի ստացած թվանշանի, հաճախ նաև՝ ծնողներին ուղղված երկտողը: Գնահատման սկզբունքներն են՝ արդարությունը, օբյեկտիվությունը, հուսալիությունը, անկողմնակալությունը, հավաստիությունը, հիմնավորվածությունը, մատչելիությունը, թափանցիկությունը և այլն: Բոլոր ժամանակներում մանկավարժ գիտնականները փորձել են որոնել թվանշաններով գնահատման ուղիներ, միավորային ոչ մի համակարգ չի կարող ստույգ արտահայտել աշակերտի ուսումնական գործունեության արդյունքների չափը, խորությունը, մակարդակը: Գնահատականը երբեմն կատարում է կարգապահության ամրապնդման, ինչպես նաև պատժի գործառույթ: Արդի գնահատման համակարգերի վերլուծությունը ցույց է տվել, որ ընթացիկ գնահատման գործող համակարգը հնարավորություն չի տալիս ապահովելու սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամբողջ բազմազանության բացահայտումը, քանի որ սովորողի ուսումնառության իրական պատկերը ստանալու նպատակով անհրաժեշտ է կիրառել և համադրել ստուգման տարբեր ձևեր և

տեսակներ»[2]: Այսօր դեռևս բավարար չափով մշակված չեն սովորողների բարոյական որակների, վարքագծի, արժեհամակարգի գնահատման ձևերն ու գործիքները, որոնք դեռևս տրամաբանական ամբողջականություն ներկայացնող ավարտուն տեխնոլոգիաներ չեն, այլ միայն գնահատման առանձին եղանակների հանրագումար, մասնավորապես՝ նիշային: Գնահատման արդյունավետությունն ու օբյեկտիվությունը կարելի է ապահովել միայն մանկավարժական հետևյալ պահանջների բավարարման դեպքում.

♦համակարգվածություն,

♦համալիր ամբողջություն,

♦բազմագործոնային բնույթ,

♦մարդասիրական ուղղվածություն,

♦ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի արդյունավետ կազմակերպում,

♦հոգեբանական և մանկավարժական ախտորոշիչ միջոցների կիրառում, գնահատման նկատմամբ աշակերտակենտրոն՝ տարբերակված, անհատական մոտեցում,

♦աշակերտի կողմից գնահատման համակարգի ձևերի և մեթոդների գիտակցում և ըմբռնում,

♦ինքնագնահատման, համադասարանցիների գնահատման և ընդհանուր գնահատման գործընթացում ակտիվ համագործակցում և երկխոսության կիրառում:

Անառարկելի է այն փաստը, որ մարդու կողմից արտաքին աշխարհի գնահատումն իրականանում է սեփական ներաշխարհի ճանաչման և ինքնագնահատման պրիզմայով բեկման միջոցով, որի ընթացքում նա առաջնորդվում է բարու, գեղեցիկի, արդարության, ճշմարտության և այլ բարձրագույն արժեքների, այս կամ այն արարքը կամ երևույթը, գործնական աշխատանքը գնահատելու մասի ունեցած սեփական պատկերացումներով և ընդունված նորմերի իմացությամբ: Այսպիսի գնահատումը ուսուցչից պահանջում է հստակ պատկերացում ունենալ իր սաների անձնային, հոգեբանական, սոցիալական առանձնահատկությունների մասին, նա պետք է իմանա, թե ինչ է ցանկանում ուսուցանել և ինչպես պետք է այդ կատարի, ինչպես է նա պատրաստվում տարբեր ընդունակություններով և հակումներով սովորողներին ներգրավել ուսումնական գործունեության մեջ: Դրա համար նա պետք է ուսումնասիրի իր աշակերտների անձնային բոլոր ոլորտները՝ դրդապատճառային, հուզակամային, իմացական, պահանջմունքային, էքզիստենցիալ և այլն, որի հիման վրա էլ պետք է կազմակերպի մանկավարժական անմիջական ներգործությունը: Ընդ որում, անձը պետք է դիտարկվի իր ամբողջության, բոլոր ոլորտների ներդաշնակ միասնության մեջ, այսինքն՝ ներգործելով անձի մեկ ոլորտի վրա, ուսուցիչն այդպիսով կազդի նաև մյուսների վրա:

---

[2] Աստղյան Զ.Ա.,Կրտսեր դպրոցականների գնահատման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները: Մխիթար Գոշ, Վանաձոր, 2008., 143, 130-133 էջ:

Տարրական դպրոցում գործնական աշխատանքների գնահատման համակարգը ոչ միայն պետք է ուսուցչին, ծնողին, հասարակությանը՝ տեղեկույթ հաղորդողին՝ բացահայտելու համար սովորողի զարգացման ընթացքը, այլև էական նշանակություն ունի հենց իր՝ սովորողի համար: Սովորողը գնահատականը պետք է ընկալի՝ ուղղորդելու համար իր ակտիվությունն ու ջանքերը ուսումնառության, դաստիարակության և զարգացման ընթացքում, ինչպես նաև համապատասխան հետևությունների հանգի: Անձը դիտարկելով որպես ամբողջական բարդ համակարգ և ուսուցման գործընթացի գլխավոր արժեք ու ախտորոշման օբյեկտ՝ մենք սահմանել ենք մի խումբ անձնակողմնորոշիչ դրույթներ, ըստ որոնց աշակերտի որակների գնահատման համակարգը կարող է արդյունավետ լինել, եթե այն բազմագործոնային բնույթ կրի և արտացոլի անձի գործունեության բոլոր ոլորտների բովանդակությունն ու կրած փոփոխությունները:

Կրտսեր դպրոցականի գործնական աշխատանքների գնահատման հիմնական հայտորոշիչ համակարգը ներկայացրել ենք գունային լուծման եղանակով՝ մեր կողմից մշակված առաջադիմության քարտերի տեսքով: Դրանց վրա ընդարձակածավալ ներկայացված են այն բնութագրիչները, որոնք արտացոլում են աշակերտի հիմնական հատկանիշները.

♦ակտիվությունը, աշխատունակությունը, աշխատասիրությունը,

♦բարեխղճությունը, իմացական գործունեության ձգտումը,

♦տեսական գիտելիքների առկայությունը և դրանք կիրառելու կարողությունը,

♦հաղորդակցական և համագործակցային ունակությունները,

♦տարաբնույթ գործունեություն ծավալելու ունակություններն ու հմտությունները,

♦հանձնարարված աշխատանքի կատարման արագությունը, ♦

բարեկիրթ վարվելաձևի, փոխօգնության ունակությունները.

♦ստանձնած գործի նկատմամբ պատասխանատվության զգացումը,

♦գործունեության տարբեր ոլորտներում դրսևորած ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը, մտքի ճկունությունը,

♦հոգեկան գործընթացների զարգացվածությունն ու բազմաբերտությունը:

Նշված բնութագրիչներն ընտրված են որպես մշակված, ժամանակի և փորձառության բովով անցած, հղկված և սոցիալական նշանակություն ունեցող վարքի և գործունեության գնահատման չափանիշներ: Սրանցից յուրաքանչյուրը բնութագրում է անձի գործունեության որոշակի ոլորտները: Հատկանիշների առանձնացումն իրականացվել է մանկավարժական գրականության վերլուծության, ծնողների և աշակերտների միջավայրում իրականացրած անկետայի հարցման, ուսուցիչների և աշակերտների հետ անցկացրած զրույցների, դիտումների, փորձարարական գնահատումների հիման վրա: Պատմական անցյալում և արդի պրակտիկայում առաջավոր շատ ուսուցիչներ կիրառել և կիրառում են վերահսկողության ինքնատիպ ձևեր: Օրինակ՝ Վ. Շապովալովը կիրառում էր գիտելիքների բաց հաշվառման թերթեր: Սրանց

համածայն աշակերտի ստացած յուրաքանչյուր գնահատական գրանցվում է հատուկ թերթում, որը փակցվում է դասարանի պատին՝ համընդհանուր դիտման համար, դա ապահովում էր հրապարակայնությունը և ուներ դաստիարակչական ներգործություն: Աշակերտը ցանկացած ժամանակ կարող է ուղղել իր գնահատականը՝ ստանալով բարձր գնահատական, ցույց տալով իր առաջադիմությունը և ունենալով դրական հեռանկարի հնարավորություն:

Մենք այս հետազոտության շրջանակներում առաջարկում ենք կիրառել հարցադրումների մեթոդը՝ մայրենիի ժամերին գործնական աշխատանքները արդյունավետ գնահատելու համար:

Մեր կողմից ներկայացվում է գնահատման նոր մոդել, որը կարող է, դառնալ գործնական աշխատանքների ուսուցանող գնահատման այլընտրանքային տարբերակ, որի կիրառման շնորհիվ պարբերաբար կարձանագրվեն աշակերտի անձի զարգացման գործընթացի մշտադիտարկման տվյալները՝ ակնառու ձևով արտահայտելով անձի համար ավյալ պահին էական և արդիական խնդիրները: Գնահատման առաջարկվող մոդելը տարրական դպրոցում նախատեսված է մայրենիից, մաթեմատիկայից, օտար լեզուներից, կերպարվեստից, տեխնոլոգիայից համեմատաբար ավարտուն թեմաների յուրացումն արժևորող գնահատման համար: Այդ մեթոդի իրականացման ժամանակ կիրառվում են գործնական աշխատանքների գնահատման գործընթացի մեջ սովորողներին ներգրավելու մանկավարժական միջոցներ և երկխոսություններ: Մեթոդը պայմանականորեն կոչվում է «Արևիկ» . արևի ճառագայթները աշակերտի զարգացող հատկանիշներն են, իսկ կենտրոնում՝ նրա «,Ես,,-ը: Որպես զարգացնող հատկանիշներ գործածվում են սովորողների առաջադիմության գնահատման բազմագործոնային համակարգում արդեն իսկ նշված որակներն արտացոլող քարտեր, աշխատանքի կատարման արագություն (կապույտ), ինքնուրույնություն (մոխրագույն), ակտիվություն (կանաչ), պատասխանատվություն (վարդագույն) և այլն: Ուսուցիչը պետք է ունենա տասը գունավոր քարտ, որոնցից յուրաքանչյուրում ներկայացված է աշակերտի որևէ հատկանիշ: Տարբեր առարկաների համար այն պահանջում է որոշակի ստեղծագործական մոտեցում, կարելի է միայն փոփոխել քարտերի ձևը, որպեսզի աշակերտի համար լինի ավելի հետաքրքիր և գրավիչ: Դրան կարող են մասնակցել նաև սովորողները: Օրինակ՝ մայրենիի դասին, երբ աշակերտներն ուսումնասիրում են «,Մայրենի 2,,դասագրքի «,Իմ հայ լեզու, իմ ուժն ես դու,, թեմատիկ խմբի նյութերը, քարտերը կարող են տառերի տեսք ունենալ: Աշնանը վերաբերող թեմաների համար՝ մրգերի, ծմռանը՝ փաթիլների, գարնանը՝ ծաղիկների և այլն: Քարտերը կարելի է գունավորել կամ կտրատել կերպարվեստի և տեխնոլոգիայի ժամերին: Եթե աշակերտը դրսևորում է անձնային այս կամ այն որակը, ապա ուսուցիչը նրան տալիս է համապատասխան գույնով քարտ: Դասընթացի որոշակի փուլի ավարտին երեխան պետք է կտրի տվյալ գույնի քարտերի քանակին համապատասխան երկարության ճառագայթ և գնահատման իր անհատական պաստառի վրա փակցնի «,Արևիկ,,: Պաստառը A3 չափի թղթի վրա պատկերված արև է, որի կենտրոնում երեխան կարող է փակցնել իր լուսանկարը: Տվյալ մեթոդը աշակերտներին հնարավորություն է ընձեռում

պատկերավոր դարձնելու նրա բարոյահոգեբանական Ես-ի բարդ համակարգը: Աշակերտի այդ հատկանիշներից մի քանիսը կարող են առավել զարգացած լինել, մյուսները՝ պակաս, այնուհանդերձ, նրանք հանգում են այն եզրակացության, որ անձը որոշակի հատկանիշների ներդաշնակ ամբողջություն է, և պետք է համարժեքորեն գնահատվեն բոլորը: Բացի դրանից, մեթոդը ինչպես ուսուցչի, այնպես էլ աշակերտի համար տեսանելի է դարձնում սովորողի անձի ուղղվածությունը, ակտիվությունը, աշխատունակությունը, ինքնուրույնությունը, ուսումնական և վարքային դրդապատճառները, արժեքային կողմնորոշումները, իմացական պահանջմունքները և այլն: Սովորողների ուսումնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք ավելի ակտիվ ու ինքնուրույն են դառնում կիրառված մանկավարժական ներգործության շնորհիվ: Նրանց մեջ ձևավորվում են ուսումնաիմացական դրդապատճառներ, զարգանում իր և այլոց արարքները վերլուծելու ունակություն, նախաձեռնողականություն: Ուսուցիչը, որն իր գործունեության մեջ իրականացնում է առաջարկվող գնահատման մոդելը, պետք է ունենա գնահատման չափանիշները աշակերտներին և ծնողներին չպարտադրելու ունակություն, զրույցի և դիտումների ընթացքում աշակերտներին սովորեցնի սեփական տեսակետ ձևավորել և գնահատել: Սա նշանակում է, որ ուսուցիչն առաջին հերթին ինքը պետք է աշակերտի վերաբերյալ գնահատողական կարծիք ունենա, որպես իրեն իրավահավասարի՝ վերլուծի առկա բոլոր կարծիքները և արդյունքում դրանք ամբողջացնի որակական մեկ միավորի մեջ, որն էլ հենց բնութագրում է գնահատվող աշակերտի անձնային որևէ ոլորտը: Մեր կարծիքով՝ այս աշխատանքի նշանակալի նվաճումը սովորողների պատասխանատվության գիտակցման մակարդակի աճն է այն գնահատականի նկատմամբ, որն ստանում էնա հատկապես ուսուցչի կողմից: Աշակերտը տեսնում ու գիտակցում է, որ գնահատականը արտացոլում է իր նվաճումը, և միայն ինքն է ի զորու փոխել այն:

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: <u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>	Ասատրյան Զ.Ա., Անձնակողմնորոշիչ մոտեցման արդի խնդիրները ժամանակակից գնահատման համակարգում, Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն, Եր., Զանգակ– 97, 2009, 228, 13-19 էջ: Ասատրյան Զ.Ա.,Կրտսեր դպրոցականների գնահատման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները: Մխիթար Գոշ, Վանաձոր, 2008., 143, 130-133 էջ:

Օգտագործված մեթոդները, գործիքները	Աշխատանք գիտական գրականության հետ, վերլուծություն և համադրում, համեմատում, ընդհանրացում, գրույց, դիտում, գիտափորձ:
Իրականացման ժամանակահատվածը	12- 25 սեպտեմբեր
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	12 աշ., 6 աղջիկ, 6 տղա

Եզրակացություններ, առաջարկություններ

Ուսումնասիրելով տարրական դպրոցում գործնական աշխատանքների գնահատման առանձնահատկությունները՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

- Ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն գործնական աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները:
- Գործնական աշխատանքների գնահատման արդյունավետությունն ու օբյեկտիվությունը կարելի է ապահովել միայն մանկավարժական հետևյալ պահանջների բավարարման դեպքում.

♦համակարգվածություն,

♦համալիր ամբողջություն,

♦բազմագործոնային բնույթ,

♦մարդասիրական ուղղվածություն,

♦ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի արդյունավետ կազմակերպում,

♦հոգեբանական և մանկավարժական ախտորոշիչ միջոցների կիրառում, գնահատման նկատմամբ աշակերտակենտրոն՝ տարբերակված, անհատական մոտեցում,

♦աշակերտի կողմից գնահատման համակարգի ձևերի և մեթոդների գիտակցում և ըմբռնում,

♦ինքնագնահատման, համադասարանցիների գնահատման և ընդհանուր գնահատման գործընթացում ակտիվ համագործակցում և երկխոսության կիրառում:

- Ուսուցիչը, որն իր գործունեության մեջ իրականացնում է առաջարկվող գնահատման մոդելը, պետք է ունենա գնահատման չափանիշները աշակերտներին և ծնողներին չպարտադրելու ունակություն, զրույցի և դիտումների ընթացքում աշակերտներին սովորեցնի սեփական տեսակետ ձևավորել և գնահատել:

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	
Տարրական դպրոցում գործնական աշխատանքների գնահատման արդյունավետ կազմակերպումը զարգացնում է սովորողների ինքնուրույնությունը, ստեղծագործական կարողություններն ու քննադատական մտածողությունը: Հարցադրումների մեթոդի ճիշտ կիրառությունը ուսումնական գործընթացը դարձնում է առավել ակտիվ, հագեցած ու հետաքրքիր:	
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասատրյան Զ.Ա., Անձնակողմնորոշիչ մոտեցման արդի խնդիրները ժամանակակից գնահատման համակարգում, Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն, Եր., Զանգակ– 97, 2009, 228, 13-19 էջ:

2. Ասատրյան Զ.Ա.,Կրտսեր դպրոցականների գնահատման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները: Մխիթար Գոշ, Վանաձոր, 2008., 143, 130-133 էջ:

3. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն, Եր., 2008. 9 էջ:

4. Ահիմայելյան Օ. Ս., Ահիմայելյան Ս. Օ., Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, Եր., 2010, 45 էջ:

5. Սովորողների ընթացիկ գնահատման հայեցակարգ, 2008:

6. Амонашвили Ш.А., Гуманно-личностный подход к детям.-М.: Изд. «Институт практической психологии».- Воронеж: Изд. НПО «МОДЭК» (серия «Психология отечества») 1998, 544 с.
7. Липатникова И.Г., Современные средства оценивания результатов обучения: учебное пособие / И.Г. Липатникова. -Екатеринбург: УрГПУ, 2010, 254 с.
8. Педагогика: Учебное пособие для студ. пед. учеб. зав. /В. А. Сластенин, И. Ф. Исаев, А. И. Мищенко, Е. Н. Шиянов., -8-е изд. -М., Академия. 2008, 566 с. Стр. 277- 281.
9. Селевко Г.К., Современные образовательные технологии: Учебное пособие.-М.: «Народное образование,,, 1998, 256 с.